ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2022 թվականի N 344-Ա**

## ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 71 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Քրիստինե Մանուկյանին* 2022 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 2-ը ներառյալ, երեք օրով գործուղել Չարենցավան համայնքի Արզական գյուղ՝ որպես Սյունիքի մարզը համակարգող-դեսպան՝ Աղվերանում անցկացվող Իթվինինգպլյուս Հայաստան ծրագրի համաժողովին մասնակցելու համար:

2. *Քրիստինե Մանուկյանի* գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության աշխարհագրության ուսուցիչ *Լուսինե Դանիելյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2022 թվականի սեպտեմբերի 30**
**ք. Հրազդան**